

ՓԱՌՔԻ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԵՐԳԱ ԵԿԵՂԵՑԻ ՍԵՐՋ

(Շաբաթ տես 189-1900)

**Ա. Ա. Ա. 2.** Վարելով մեր սույ ակնարկն,  
բննենք թէ սուսի ծաղումն առած են այս  
տարբերաթիւնը. և նախ, բննելով Առարե-  
լական Սահմանագրութեանց ընծայած ձեւը,  
կը տեսնենք իսկոյն որ, ինչպէս ուրիշ ան-  
դամ եւս ըստնք, կը տարբերի միւսներէն՝  
զայց ի այսց անծանօթ յաւելուածներէ, նաեւ  
բաց ի այսց անծանօթ յաւելուածներէ, նաեւ  
արիսնեան գաղափարներով. բաւական է նկա-  
տել միայն սոյն ձեւը.

Ասուուած Հայր ամենակարուղ.  
Տէր Ասուուած, Հայր Քրիստոսի  
անարտա գառին  
որ բառնայ զմելու աշխարհի.

Ասուուած Հայր ամենակարուղ.  
Տէր Հայր ամենակարուղ, ի գէմս  
նապէս կը մերմափ ի Քրիստոսէ, ի գէմս  
Հօր ընծայելով ինչ որ այլք միաբան ի գէմս  
Որդույն կը զնեն ուղղափառութեամբ.

Ասուուած Հայր ամենակարուղ.  
Տէր և որդի Հօր միածին  
Յիսուս Քրիստոս,  
Տէր Ասուուած գառն Ասուուածոյ  
Որ բառնաս զմելու աշխարհի:

Եւ գարձեալ հիսուեհալ ասութիւնն, որ  
նոյնպէս կ'ընծայուի Հօր Ասուուածոյ,

Որ նստիս ի վերայ բերսլուից,  
մինչեւ այլք ամենի միաբան կը զնեն Որդ-  
ոյն համար՝

Որ նստիս ընդ աջուկ Հօր<sup>1</sup>:  
Նոյնը կը հաստատեն գարձեալ բանի մի

4. Թէզէտեւ Migne (Encyclopédie Théolo-  
gique. Հատոր Ը. Liturgie կ բառն Doxologie)  
ույն և յաջորդ յաւելուածոց մէջ՝ փոխանակ  
արիստականութեան, հնութեան նաև մը կը  
համարի տեսնել բուն իսկ մեր խնդրոյ նիւթ  
առած բառերու մէջ:

2. Այս մասերու մէջ զեսեւս աւելուրդ կը  
համարինք հայկական բնագիրն ալ յիշել, քա-

առ վիրջ բառերն անժին, անմասոյց, միայն.  
ինչպէս նաեւ յետին փառարանութեան ձեւն  
ի ձեւն որոյ քեզ փառք, և այլն:

Սակայն մէկդի թողով այդ ազաւադիալ  
մասերն, և մերձեցնելով զայս բնագիր՝ Ամ-  
բոնիս բնագրոյն, կը յայտնուի մեզ ձեւ  
մը, բիւզանդիան և Հունական եկեղեցեաց  
գործածած ձեւն հնագոյն, և զոր ասորե-  
րէնի հետ եւս համեմատելով, կը յաւանը  
զանել (սրչափ կարելի է առ այժմ) հրեշ-  
տակային երգիս հնագոյն ձեւ մը, որպէս վրայ  
ձուլուած են առաջին երկուրը, մինչ իւր  
ներձուածած արիստական զաղափարներով,  
միւսն ալ ուղղափառական յաւելուածներով,  
Այս երկու ձեւերն ամենասերտ կապակցու-  
թին մ'սնին իրարու հետ, սակայն ամե-  
նալիւարին է սառուցիւ որոշել, թէ ոյք եղան  
առաջին անգամ այդ յաւելուածները ներ-  
մուծագը. արգեօք արիստականը աղաւազեցին  
ուղղափառաց յաւելուածները, թէ ուղղա-  
փառը՝ անսնցն ուղղեցին: Առ այժմ յետին են  
թագրութիւնը՝ հաւանականագոյն կ'երեւի մեզ:

Գարձեալ՝ համեմատելով Առարելական  
Սահմանագրութեանց ընծայած ձեւն Ամբոն-  
սեան բնագրոյն հետ, կը տեսնենք որ օրհ-  
նաբանութեան ձեւերն գովեմը զքեզ, երգա-  
րանեմը զքեզ, և այն, երկուքն ալ միենայն  
կարգա կ'ընծայեն. մինչեւ միւս բնագիրը  
թէ ասոնցմէ և թէ իրարմէ տարբեր կարգաւ  
կը զնեն զանոնք: Զարմանալի է միայն՝ որ  
Առար. Սահմանագրութեանց օրինակը չու-  
նի Գոհանաւամը զքեմ ձեւը: Զարմանալի է  
գարձեալ, ինչպէս ուրիշ անգամ եւս ակն-  
արկեցինք, տեսնել որ Բիւզանդիան և Հուն-  
մական եկեղեցեաց գործածած ձեւերու մէջ,  
որ բաս ամենայնի միաբան կ'ընթանան,  
Բիւզանդիականը կը լոէ Գովեմը զքեզ հա-  
տածը<sup>2</sup>, Հունմականն ալ փոխարձ պա-

նի որ Բիւզանդեան ձեւոյն Ֆիշէ թարգմանու-  
թիւնն է, բաց ի սեղհական պատիկ տարբե-  
րութիւններէ: Հաս միայն կ'ուղենք ցաւցնել  
որ ի հնութմ Բիւզանդեան ձեւն ալ ունեցած  
պիտի ըլլայ գովեմը զքեզ հատածը, որովհե-  
տեւ կը գունուի նաեւ հայերէնի մէջ, որ անոր  
բառական թարգմանութիւնն է:

բապ մը կ'ընծայէ Երգարանեմք զքեղ հաւ  
տածին . — ի ձեւե մեծի բահանայավետին  
և դու ևս միջնորդ բարեւաց մերոց հատուած  
ներն , որսց առաջինը կը զանենք Ապար .  
Աահմանազրութեանց և երկրորդն ասարաւ  
կան բնազրին մէջ , կը յիշեցնեն մեղ Ա .  
Կղեմայ Հռովմայեցւոյ առ կարնմացիս աւ  
ոաջին թղթայն հետեւեալ բասերը . « Քեզ ...  
գովամիթւնս մատուցանեմք ի ձեն Քահաւ  
նայապետին և Միջնորդին անձանց մերսց  
Յիսուսի Քրիստոսի<sup>1</sup> » :

Բաւական սեպելով այսչափս՝ անցնինք  
Համեմատելու ցայլմ բնծայուած բնազրինեւ  
րը , հնագոյն ձեւ մը զանելու համար ւ

### Բ

ՀԱՅՈԳԻՑ ՁԵՒ ԵՎԻՆԵԼՈՒԱՆՔ<sup>2</sup>

Միացնենք նախ այն հատուածները՝ զորս  
Ապարելական Աահմանազրութեանց և Ա. Հ.  
բրոսեան օրինակները կ'ընծայէն մեղ միա-  
բան .

Փառք ի բարձունս Աստուծոյ  
Եւ յերկրի Խաղաղութիւն  
ի մարդիկ Համութիւն  
Գովերք զքեղ  
Երգաբանեմք զքեղ  
Բարեբանեմք զքեղ  
Փառաւորեմք զքեղ  
Երկրացուցանեմք զքեղ  
Խստովանիմք զքեղ  
Յիսուս Քրիստոս  
Որդի Բարձրելոյ  
Գատն Աստուծոյ  
Որ բառնաս զմեզս աշխարհի  
Ընկալ զաղաչանս մեր  
Որ նստիս ընդ աշմէ Հօր  
Ուղղմեաց մեղ  
Զի գու Աստուծած մեր  
և գու Տէր մեր  
Յիսուս Քրիստոս  
Փառք . . . ամէն :

Ա.Ա.Ա. ԱԱ.Հ.Մ . ԱՄՐԲՈՍ .  
Հայր Քրիստոսի Որդի Հօր  
անարատ գառին Գատն Աստուծոյ  
որ բառնայ զմեզս աշխարհի որ բառնաս զմեզս աշխարհի  
ընկալ զաղաչանս մեր  
Որ նստիս ի գերայ երովդելոց Որ նստիս ընդ աշմէ Հօր  
Ուղղմեաց մեղ  
Զի գու միայն Ասուրը  
Գու միայն Տէր  
Յիսուս Քրիստոս  
Ի ձեն որպ քեզ վասք . . . ի վաս Աստուծոյ Հօր  
ամէն :

Այսմ համեմատենք այս ձեւը ասորաւ  
կանին հետ .

Փառք ի բարձունս Աստուծոյ  
Եւ յերկրի Խաղաղութիւն  
ի մարդիկ Համութիւն  
Երկրի պագանեմք քեզ  
Փառաւորեմք զքեղ  
Բարձրացուցանեմք զքեղ  
Խստովանիմք զքեղ  
Յիսուս Քրիստոս  
Որդի Բարձրելոյ  
Գատն Աստուծոյ  
Որ բառնաս զմեզս աշխարհի  
Ընկալ զաղաչանս մեր  
Որ նստիս ընդ աշմէ Հօր  
Ուղղմեաց մեղ  
Զի գու Աստուծած մեր  
և գու Տէր մեր  
Յիսուս Քրիստոս  
Փառք . . . ամէն :

Այս կամ ասոր ամենամերձ ձեւ մի կ'են-  
թազրենք թէ նախական եկեղեցւոյ մէջ զործ-  
ածուած ըլլայ , որ և ապա զանազան փու-  
փուստիւններ կրած է , և այս է պատճառ  
երգիս այլեւայլ ձեւերու<sup>4</sup> :

ամսոյ պրակի համեմատական ցուցակին մէջ :  
(Քազմ. 4900 էջ 110-116) :

4. Αμέδέο Gastoué , — « Revue de l'Ori-  
ent Chrétien » Հանդիսին մէջ , ուսումնասի-  
րութիւն մը լնելով Փառք ի բարձունս ի հնա-  
գոյն ձեւը զանելու համար , հետաքրքրական  
մէջոց մը ձեռք կ'առնաւ . և ենթազրելով թէ  
ի սկզբան ուստանաւոր գրուած ըլլայ սոյն երգու  
յունարէն բնազրոյն մէջ կը գանէ յատուեկ  
չափ մը և ըստ այնմ տողելով , կը պատէ յե-  
տոյ մուծուած հատուածները :

1. Հմմտ . Վարդապետութիւն ԺԲ . Առաքե-  
լոց . (էջ 201) . Կ. Պոլիս 1898 .

2. Հետեւեալները դիւրաւ համեմալու հաւ-  
մար , հարկաւոր կը համարինք որ ընթերցողն  
աչաց առջեւ ունենայ , Բազմակիսի անցեալ  
տարւոյ մարտ պլակի համեմատական ցուցակը  
(յէջս 110-116) :

3. Միանգամ ընդ միշտ կը ժանուացանենք  
որ՝ պլատիկ տարբերութիւններ , եթէ իմաստից  
առանան և եթէ շարազրութեան , զանց կ'ընենք կը բ-  
յիշել հսու , արդէն իսկ ընթերցողք ինքնին կը բ-  
նան զանոնք տեսնել , անցեալ տարւոյ մարտ

Հայոց պատմութեան առաջնահարուստ անունը անձուն է աղա առաջնահարուստ անունը անձուն է աղա

Եթէ արդ համեմատենք վիրայիշեալ հնաւ  
զպյն ենթապրուած ձեւը միւս բնագրաց հետ  
մի առ մի, իսկայն պիտի ներկայանան մեղ  
զանազան յաւելուածք որ եղած են ի տեղիս  
տեղիս, և անսնց քննութիւնը, սոյն հրեշ-  
տակային երգիս կազմակերպութեան վրայ  
ազօտ լցու մը պիտի արձակէ. կը փութանը  
սակայն ծանուցանել, որ մեր տեսսութիւնք  
առ այժմ հաւանական ենթապրութիւնց սահ-  
մանէն անդին չեն անցնիր:

— Հիմն և առաջին բնագիր ամենուն,  
եղած են հրեշտակային օրհնութեան բառե-  
րը, զորս կը կարգանք Ա. Դուկասու աւե-  
տարանի Բ. վլխայն մէջ, որու վրայ հետ-  
զիստէ եկած են պլիեալլ յաւելուածք օրհ-  
նութեանց զանազան ձեւերու, անոր համար  
և երգս կոչուած է երեսին նաև բազմօրհեեւած  
փառարանուշրիւն (ուղարկութուն), ինչպէս կը  
կարգանք Ա. Գիոնիսիսի Արխսաբացւոյ  
ընծայուած՝ յաղագն երկնային քահանայա-  
պետութեանց զրբին մէջ. «Բազմութիւն զօ-  
րաց երկնաւորաց զրագմօրհեեւանն զայն փա-  
ռարանութիւն աւանդէին»<sup>1</sup>, ինչպէս և ի տօ-  
նապատճառ ինչ, «Հովուացն տային աւե-  
նապատճառ ինչ, «Հովուացն տային ընդ-  
ափառ ինչ»<sup>2</sup>:

**Առաջին յաւելուած**, ըստ կարգի, զւ աւ նենը հայկական բնապրի հրեշտակային խօսքի բրուն անմիջապէս կցուած (և) օրհնուորիչէ

Ա. Այս փաքքիկ հատուածն ալ՝ մինչեւ ցարդ  
քննադատներու աջեկն խուսած ապացոյց մէկ որ  
այդ զիրքը չկրնար Առիսապագացուոյն ընծայութել.  
որպէս կետեւ դեռ իւր ժամանակի անկարեկի եր  
թագմօրինեան յարջորջումը տառ հրեշտակային  
բազմօրինեան յարջորջումը մասին իսկ եկեղեցա-  
կրպիս որուն առաջին մասին իսկ եկեղեցա-  
կան գործածութեան մէջ ըլլալը՝ իւր ժամա-  
նակի տարակուական է դեռեւ:

2. Հմատ նաեւ բարիւ մակար մակար պետան . Բազմօրինեան կոչք (երգու մակար պատետան) . Եթաւ մակար պետան ամայս (երարհագոյն տեսաւ պետան յինքետան ամայս) և բարձրագոյն տեսաւ պետան յինքետան է այս օրհաւ բարեալ ունի . զի ըրեւակական է այս օրհաւ բարեալ ունի . և զի կամ թեան մարդկան աւետիք .

բեզ ի բարձուշն մասերը, որոնք կը համարինք թէ յանական ծիսէ մը ծագումն առաջ ըլլան . վասնզի ըստ յանական չին սովորութեան, աւագերեցն ի ժամերդութեան բարձրաձայն կը սիսէր հրեշտակաց մասը և ժողովարպը միաբերան յառաջ կը առանէր զայն, անջուշա կրկնութեամբ մը սիսերով և օրինեութիւն բեզ, և այն.

Քան զայս աւելի հետապնդական է, յաւ ջորդ յաւելուածն (օրինեւմը զբեզ), զովելը զբեզ և այլն, ձեւերու, որք թէպէտ զրիթէ ամէն բնազրաց մէջ կը զանուին, բայց ու րովհետեւ ոմանքը յամանս կը պատիսին կամ տարբեր կարգաւ շարուած են, իրաւացի է կատկածեն որ յօրինուած ըլլան հին փառաւանութեան ձեւին վրայ.

σοι πρέπει αἶνος, σοι πρέπει ὅμινος,  
Αἴγοῦμεν σε, ὅμινοῦμεν σε,-  
Τηνῆλατρον κράτησεν,

σοὶ δόξα πρέπει . . .  
δοξόλογοῦμεν σε . . .  
μαυρητεῖρ φρέσκ . . .

որ եղեւ ի ձեռն միածնի Որդւոյ Աստուծոյ:

5. Ուրիշ կերպով մեկնեց զայս մեկնեցն ժամանակարգութեան աղօթիք (էջ 165-ի). « Աւստանի մեջ ի զուարթնացն հրեշտակական փառաբանութեամբն, եթէ առաւ ծննդեամբն Քրիստոս յերկիր խաղաղապահթիւն և ի մարդկի հաճութիւն վասն սրբյ երկնայինքն փառք երգէին ի բարձունք. Աստուծոյ Գնոյն և մեր ձայնակցելու երկնայինցն ասեմք. Օքնաւթիւն Տեսոն բարձունք »:

4. Պետական . Ա. Պողիկարապուսի մ. 3. -  
Հմատ. Վարդ. մբ. Առաքելցոց, էջ 106:

Այս օրհնութեան ձեւերու անմիջապէս կը յաջորդեն Առաք. Սահմանադրութեանց և ասորական օրինակներու մէջ նման և տարարեր<sup>1</sup> յաւելուածներ, որոնք մի սկզբն ու ննալ կը թուին, և ասորույն Հայոյ և Արդի և Հոգի Մուրք ասողը բոլորովին յեայ մուծուած է, ինչպէս նաև երկու առող վերջ յաւելուածն Բնակեալդ ի լոյս գերազանց, ի մարդկան ու տեսնեալ և անտեսանելի:

Յաջորդ պարբերութեան մէջ հայերէն օրինակն՝ աւելցուցած՝ սուրբ, և հոսմէտակունին՝ Աստուած (որ մի քանի ամբուսիան ձեռագրաց մէջ եւս զանուի) բառերը, փաբրիկ շփոթմութիւն մը պատճառեն իմաստից, դանական կեապրութեամբ յառաջ բերելով. Հայ. օր. կ'ընթեանու Տէր բագաչոր սուրբ<sup>2</sup> երկանային, Աստուած և Հայր ամենակալ. Քիչ տարբերութեամբ հոսմէտականն ալ կը զնէ. Տէր Աստուած, բագաչոր երկանային – Աստուած Հայր ամենակալ. մինչեւ միւսները ճշգագոյն կ'ընթեանուն, Տէր բագաչոր, երկանային Աստուած, Հայր ամենակալ: Ասուրին հոս եւս իւր սեպհական արեւելեան ճոխ սճով, փոխանակ այլոց Տէր և բագաչոր բառերս, կը զնէ կրկնութեամբ բագաչոր բագաչորաց և տէր տերանց, և կը յաւելու նաև բնակեալ ի լոյս գերազանց. յիշատակելով Առաքելոյն խօսրերը. «Երանելին և միայն հօրն բագաչորն բագաչորաց և տէրն տերանց, որ միայն անի զանանչութիւն բնակեալ ի լոյս անենառոյց»: Ասկէ վերջ կը սկսի երգիս երկրորդ մաս մը, Արգւոյն Աստուածոյ սեպհական, որ ի հնումն անշուշտ կը սկսէր անմիջապէս Տէր Աստուած զան Աստուածոյ բառերով, ի բաց թուղով:

1. Նման և տարբեր կոչենուս պատճառն՝ բառերու արտաքին զանապանութեան մէջ, իմաստի ներքին նմանութիւն գտնելնս է. և այս չէր հանգիպեր եթէ երկուքն ալ միեւնոյն աղբերէ յառաջ չգային: Առաք. Սահմ. կը գնեն. (Գովելեմք) զբեզ զեակի Աստուած, զանձինդ, զմի, զանենառոյցդ միայն. և տարբին, բարձրացուցանելեր զբեզ և ի յաշխտելից, բնութիւն ժամկեալ, անիմանալի:

2. Մեր գրչագիր 1.9. թիւ ժամագրին հոս

նախընթացները, զորս չունի Առաք. Սահմանադրութեանց օրինակը, ինչպէս նաև ամբուսիանը, որ կը զնէ միայն Յիսուս Քրիստոսուն բառերը, իսկ ասորույն յաւելուածն՝ դու միայն սուրբ, դու միայն հզօր, դու միայն անման, հանրածանոթ երկորսեան (Պուրբ Աստուած, Պուրբ Հզօր, Պուրբ Անման) փառատարութեան յիշատակը կը զարթուցանէ ի միաս սակայն գիւռարին է որոշչել, թէ այս երկուքն ըրհն է սկզբնական ձեւը, և որն՝ այլայլեալը Եւ եթէ առաջնոր յեանոյս այլայլած ձեւ մըն է, ինչպէս սոսոյդ կ'երեւի, պէտք ենք ընդունիլ որ քան զինն գերորդ գար յառաջ չկրնար Փառաք ի բարձունքն մէջ մասած ըլլալ, որովհեան առաջն անգամ Պրուկի (434–447) ժամանակ եկեղեցական գործածութիւնն մ'առնելէ վերջ մասնական յաւելուած մը պիտի լինի:

Յաջորդ Հոգույն Մորոյ կոչումն (և) Մուրբ Հոգի, որ կը զանուի Յիսուսանգեան օրինակի մէջ, ինչպէս նաև ընդհանրապէս՝ ամբուսիան ձեռագրաց մէջ, բալորովին անճահ և տղիտական յաւելուած մ'է և կը խանչ գարէ երգին բան իմաստը. անոր համար ասորի և Առաքելական Սահմանադրութեանց օրինակը չունին բնաւ. հոսմէտական ձեռագիրը եւս կամ բալորովին կը լրեն, կամ փոփոխմամբ կը զնեն ընդ Մուրբ Հոգույն անելի մեծ խանգարում պատճառելով: Ի մեզ եւս մտած է այդ յաւելուածն, ինչպէս յայտնի կ'երեւի մեր մատենագարանի իթ թիւ զրչագիր մամագրբէն<sup>3</sup>. սակայն մեր Հարբ,

լոյսդ երկանային գնելը, ասորական աղքեցութեամբ մ'եւլած կ'ենթագրենք:

5. Ինչպէս յայտնի է նաեւ ի Անկութենէ ժամակարգութեան, ուր Խոսրով՝ կամ խմբագրութեան և կէս օրինակ ի տեղիս յայս փոխանակ որդւոյ այսպէս սնելով բանին, և Մուրբ Հոգի ու սակայն երկրորդ ընթերցուածը սիամ համարելով, ինքը կը մեկնէ ըստ առաջին ընթերցման: — Դարձեալ լաւ կը համարինք հոս յիշել ի վերջ նոյն գրոց

անյարսնաբութիւնը տեսնելով, և չհամարձաշ  
կելով բոլորովին զայն զուրս ձգել, փոխելով  
ըրած են և սուրբ որդի, որ նոյնպէս ան-  
յարմար է տեղույն:

Հսու ուրիշ յաւելուած մ' եւս մուտ կը  
զանէ՝ Գառն Աստուծոյ որ բանեաս զմեղս  
աշխարհի, ողորմեաց մեզ, հին ծանօթ ձեւը,  
որուն մէջ Հայերէնը սեպէտական տող մ'ալ  
կ'աւելցունէ այլոց անծանօթ. որ առեր զմերս  
ի կրւսէն (ըստ ոմանց՝ յաշլարինէ), և փո-  
խանակ ողորմեաց մեզ—ի կը զնէ ողորմե-  
ցար :

Ըստ Ակադեմիայի մեր հաստածն ալ, որ  
ըստ Առաք. Սահմ. և լատին ու Հայ բնա-  
գրաց՝ Դափորդ Գրան Աստուծոյ-ի վերաբե-  
րիլ կը թուի, ասորի ձեր՝ յայտնապէս կը  
սահմանէ Որ եսախ ընդ ազմէ Հօր յաւե-  
լուածին: — Իսկ ամբողջամատիկի եր-  
կար յաւելուածը, բոլորովին յասուկ է Մի-  
լանու հեկեղեցին, և մի քանի գարձուածին,  
ինչպէս՝ ազատեան զեզ ի ոշեամեաց... ի  
ներեւեփիրսաց, յարխանուաց, ի հերձուա-  
ծողաց, ի բարբարսաց, յայտնապէս կը  
ցուցնեն թէ ո՛ր ժամանակ աւելցուած կրնան  
ըլլալ: — Զեն կրնար յօրինուած ըլլալ յա-  
ռաջ քան զշորագոր գար, և ոչ յետյ քան  
զիկրջ հինգերսրդ գարու, և բառ այսու, թե-  
րես կարելի ըլլայ Ա. Ամբողուիսի եւս վե-  
րագրել այդու յաւելուածն, ինչպէս կը հա-  
մարին ունան: Բաւական է անսարի մը տալ  
պատմութեան, այդ մեր ըստածն ստուգելու  
համար, — 355ին կոստանդ կայսեր հրա-  
մանաւ 300 եպիկոպոսաց ժողով մը կը  
գումարուէր ի Միլան, և կայսրն բանութեամբ  
և խարէւթեամբ կը օտիսէր զեղսակովու-  
սունս ժողովայն որ նոզովին զԱ. Ամանաս, և  
զարիսուականս ընդունին ի հազորութիւն ե-  
կեղեցոյ. և անոնք որ արիսւթեամբ զէր  
կը կենացին կայսեր, կ'աքսորուէին կամ  
չարաչար տանջանաց կը մատնակին, ասոնց

գրուած հետեւալ ծանուցումը, և Մանիկիքը եղայս պիրելիք, զի ի խորագիր փառք ի բարձրաց ամբողջ էր, թէ Խորովու է մեկնու ձեռնուն. և մեռք այնպէս եղաք. Բայց յետոյ ծաթիւն. և մեռք այնպէս եղաք.

Պատմակարգին էր նուեւ քաղաքին եպիսկոպոսը Ս. Գիոնեսիոս որ մեռաւ յաջորդու; Անմիջապէս Սրբայս կը յաջորդվէր արքունիանն Օքունաց որ զիայն ու ունէ էր իւր թիկն ընը.

սակայն 37 կին մեռնելով, ծոզովուրդն իրեն  
ետիւհասովս կ'ընաբերէ զՍ. Ամբոսիոս, փոկ  
կայսրուհին Յուստինու, ընդգէմ Ամբոսիոսի  
ուրիշ Օքանիս մը կը հանէր արիստական,  
իրքեւ եպիսկոպոս Միլանու, բայց ժողովը ը-  
դեան յաւսահատ կատաղութեան չկարենա-  
լով զիմանալ, և ոչ իսկ մէկ եկեղեցի զառ  
իրեն հպատակ: — Ասոնք՝ կարծեմք, բա-  
ւական յայտնի ցուցընեն ժամանակը յորում  
եղած են յաւելուածքն՝ ազատեա զմեզ ի  
րշնամեաց, ի հերետիկոսաց, յարիանոսաց,  
ի հերձուածողաց. բիշ ժամանակ մերջ ան-  
շուշան եղաւ նաեւ ի բարբարուաց տառին  
յաւելուածն, երբ 452 թուին Ատոփաս կը  
յարձակեր Միլանու վրայ, Հերովը՝ 476ին  
և 493ին Գոթը, և 538ին երբ Գոթը կրիին  
անդամ յարձակեցան, արդէն զբեմէ տմողջ  
քաղաքն հիմնայատակ կը կարծանէր այդ  
բարբարոսաց սրբին ճարակ տալով 300,000

Ծանօթ է ամենուն յաջորդ յաւելուտն երբայական ձեւոյն միայն Սուրբ, միայն Տիքը, որու վրայ աւելցուած են միայն բարձրեալ և Յիսուս Քրիստոս բառերը. ուակայն գտուար է որոշել թէ ե՞րբ եղած է միայն բարձրեալ բառերու մուտքն ույն երգիս մէջ, որովհետեւ Առաք. Սահմանագրութիւնք և ասորական օրինակը չունին զայն, նոյնպահ կը լսեն նաև Բիւզանդիան մի քանի ձեռագիրը: — Ինչ որ այս համեմատառվեթիւններէ, կ'երեւի, հրեշտակային երգիս հին ձեւը այս Յիսուս Քրիստոս բառերով վերջացած պիտի ըլլայ, և Հոգուն Սրբոյ յիշատակութիւնն, որ հայ բնագրոյն մէջ յատուկ ձեւ մ'առած է, բոլորովին յետոյ մուծուած կ'եւ սկսի:

նեաք ի միջին բանէնց որ այլ վարդապետի աւ-  
րարեալ է: Եւ մեզ այսպէս թուեցաւ թէ՝ նկը-  
սէսի Լամբրոնացւոյն է արարեալ ու Յետին են-  
թառող թիւնն աւ անհիւր մեր է:

Απέδεε *Gnóstoumé*<sup>1</sup> γιαχόρη φήρηδωρ  
ρωάνθη μαστίν, αρ ζωδιαποιη φωτισμαρηιθεών  
διει μ' τ., ζυν ένθισταρηιθεών μρ. λέρην, ε-  
ικερηψι θει, θέρητειν Πλωαρηλωλωάν ουδιμάντω  
φηρεθεώντας ρεο φωτιρ, ιψωτιει ή ιψωτοι  
ρωανθρει φήρηδ, φωσηρ λέρητειρ ή φωτιν Πλω-  
τηνεδηγ ζορ, ή αιτωληρητεγρ λέρ γωρητεύνακτειρ  
ρεητ Πλωτρη ζηρηταγ ηατηιτινακτειρ  
ηηρ. φωσηρ ίνηρειν, αιτητει.

Այս առևել բառէ վերջ անչուշտ կը սկսէին  
երգել յաջարդ յաւելուածն՝ մեծաւ մասամբ  
և սազմուաց քաղուած և յարմարցուած, որ  
և կը գտնաւի գրեթէ ամէն արեւելեան և  
կեղեցեաց մէջ, որոնք ի ժամերգութեան  
կ'երգեն և փառը ի բարձունքն»։ և այդ մա-  
սին աւելորդ կը համարինք հոս յերկարեւ  
Սակայն մեր հին արարութեմեան մասին,  
հոս արարակայս մը կ'ունենանք և կը համա-  
րինք որ այդ յետին յաւելուածն ի մեզ Կախ  
ոսով իբրեւ փոխ կամ սազմո՞ զպիրք կ'ըստին  
թիւ, երգի վերածուին՝ սրիշ եկեղեցեաց  
նմանութեամբ և բաւական ժամանակ վերջ  
(անշուշտ Բ. գարեն յետոյ) եղած սիմար ըլ-  
լայ. ապա թէ ոչ անմեկինի կը մնան ի-  
մասսաւուրին հետեւեալ առղերն<sup>2</sup>.

«Եւ վասն զի համեալ կարգեաց զինքն մտօք  
ընդ զուռաբնացն պարակցու միւնս, ապա ըստ  
նաց իմն կարգին ձեւանալով, սկսանի այնու-  
թենութեա (փառք ի բարձումն երգէն վիշջ) առափ-  
եանաւոր պատառու լք զնախապատուեին բա-  
րեպաշտել. յասաց վարելավ ևսախին զիսայտեն,  
և զինի նորա հետեւեալ ըստ կարգի սարկա-  
չագն (բարողութիւն). յետոյ ապա իրբեց զվեհա-  
գոյն գերաստիւնեալուն ի նոցանե ևսախկր-  
պուն : ( Դիտիկի է նոս իւ այն որ ալոթք  
եախսկոպսիթ կը մմայ զրուցիլի ) : Որպէս թէ

2. *Sku*, *Սամենաբանութիւն*, *Հաստած ՓՒ* -

ի սարուս սա ի չըրեշտակական գասուէ տա երիս  
դասս անմարմացն զմի մի կշռեալ յեկեղե-  
ցականացն, վերսունելով տո սակաւ սակաւ  
երթալ հասանել մինչեւ ի թագաւորական գա-  
հոյսն, ուրանօր սրովքեցին և բրովքեցին նո-  
խացեալ պարէ բալճութիւն: Յալշոս որոյ և  
զերեքարեանն խառն ընդ սոսոս միտքանական  
ձայնի սկսանի նոււազել »:

Մինչեւ ցայիմը ըստուածներին յայտնի տեսնուեցաւ, որ հրեշտակային երգն շատ հին ժամանակներէ ի վեր ի զրդածութեան եւ զած է ամէն եկեղեցեաց ԱՀՆ, ոչինչ տարաբերութիւն ունենալով իրարմէ բատ արտաքին ձևովն . սակայն բուն սրոշել թէ ոչ ըրած է այդ յաւելուածներն, զորս վերապայն տեսանք մի առ մի. և թէ ոչ առաջին անգամ եկեղեցական գործածութեան ԱՀ մասց զանոնք, առ այդիմ ամենապետարին է։ Հսումներ ընթերցողաց հետաքրքրութիւնը յաղեցնելու համար միայն կը յիշատակենք մի քանի զիմանը ծխաղիսաց ենթալրութիւնը։ Եղած են սմանք որ Առաքելոց ընծայած են զայս, որովհետեւ՝ ի Սահմանագրութիւնն Առաքելոց կը գանուի բառ առ բառ. սակայն ոչ որ հիմայ այդ կարծիքը կ'ընդունի, վասն զի ընդհանուր յայտնի է թէ Սահմանագրութիւնը։ Առաքելոց գործ չեն Արքիչներ ընծայած են զայս Ս. Թելեսփորոս բահանայալաթուի, և այլը։ Ս. Խլարիսնի († 367) կամ այլոց, սակայն կը սիսալին մեծապէս Անոնք որ զՍ. Թելեսփորոս կը համարին հեղինակ այս յաւելուածներու, լաւ ոչ չընելով բարից սիսալ

Այս առղերք կարելի չէ իմանալ Փառք ի բարձութեած վերջ եղանած տաւն տաւն ստվաց համար, որովհետեւ զանոնք իբրեւ երգ կը յեշատակէ նոյն իմաստաէրն. — Հմետ Յաղապէ կարգաց եկեղեցւոյ, «Երէ զիել խորհուրդ ունի Փառք ի բարձութեած առողջ առողջ այլ այլ երգը առաջոտութէ»:

Հասկցած են Արբոյս խօսքերը : Հին ժամանակականց յիշատակարանաց մէջ չենք կարգադրութեաւ թէ ինքն ըրած է այս յաւելուածներն , այլ այսչափ միայն՝ որ սահմանեց Ծննդիան օրը պատարազի մէջ երգել զիտուն ի բարձութեաւ : Ուր նոյն խակ երգայիշն անտեղի է , քանի որ յաւելուածոց մասին խօսք չկայ , և թերեւս (ինչպէս Պանա և այլ հեղինակաւոր ծիսագէտը կը համատաեն) իւր հրամայածն միայն հրեշտակային բառից վերաբերի : Աւելի եւս մեծ սիսարմամբ ընծայած են ումանք այդ յաւելուածները Սիւմարոս քահանայապետին , որ ուրիշ բան ըրած չէ այս նկատմամբ , բայց եթէ ընդարձակել Ա. Թելեսիորոսի հրամանը և պատուիրել որ ումէն կիրակի և տօն օրեր ըսուի փառք ի բարձութեաւ : Եղյանքէս կը սիսարմին նաեւ անոնց որ զԱ . Իւլարիսն կը համարին ասսոնց հեղինակ . որսովհետեւ , ինչպէս լաւ կ'անդարդարծունէ Պանա , ոչ իւր վարուց , ոչ իւր զրուածոց , և ոչ խակ իրմէ վերջ յընթացն չարուց զրուածոց մէջ՝ յիշատակային բառ , և միանուութեաւ մը չենք քանի բնակ բնակ ի բարձութեաւ : Եղյանքէս կը սիսարմին տեսանք տեսանք , իւր զարուն՝ արգին խակ շատ ժամանակէ ի վեր ձեւացած էր այս հրեշտակային երգ , և Միկանու ծովովարդոյ իրենց կողմանէ յաւելուածներ կը մոցունէն ըստ ժամանակին պիտոյից : Բայց աստի , Ա. Աթանաս՝ որ ժամանակակից է իրեն , ամբողջութեամբ կը յիշատակ սոյն երգը երբ Յաղագս կոչութեան զրուի իւրին մէջ յայնապէս կ'ըսէ . « Ասաւոտն այս սաղման ըսէ , Աստուած Աստուած իւմ , ևս առ քեզ ասաւոտ ասենեմ . . . և այս երգն ըսէ , փառք ի բարձութեաւ Աստուածոյ ,

և յերկիր խաղաղութիւն , ի մարդիկ հաշտութէն : Գովելմբ , օրմնեմբ զրեզ , երկիր պաշտամիմբ քեզ , և այլն : — Այսչափ միայն կրնանք ընկունիլ որ Ա . Իւլարիսն , արեւելիան՝ մանաւանդ յայն եկեղեցեաց մէջ արշվն խակ վազուց մասած յաւելուածն , իւր հետ բերաւ նաեւ յարեւմնասու , երբ զարձաւ յարեւելու արսորէն :

Քան զամեկն աւելի լրջութեամբ և ճշութեամբ կը վկային Դոլետեան Գ. Խոզովոյն (633) Հարք , երբ կ'ըսեն որ , հրեշտակաց են փառք ի բարձութեաւ առաջն բաները , խակ հետեւալըն « ի սրբոյց արանց յաւելան » . առանց ուզելու որոշել թէ ոյք էին այդ « Ասքը արք » : — Սակայն՝ մամանակի օդնութեամբ , երբ ապագային մի առ մի սահմանուին փառք ի բարձութեաւ մաս կազմող զանազան փառաբանութեանց <sup>1</sup> հաստատութեան և եկեղեցական կիրառութեան ժամանակին , այն առանք կազմութեան մասին աբորու զարաֆար մը կազմել :

Հեղինակաց նկատմամբ , մեր ազգային վկայութիւնք աւելի մեծ եղականութեան մուշնին , թէպէսեւ որ և է հեղինակութեանէ բուրավին զորի որ ուրիշ ազգաց ոչ մի յիշատակարան շամաձայնիր անոնց . և այդ ազգային վկայութիւնքի խակ ըսուածքն՝ ուրիշ բան չենք ենա ժամանակամբ : Սակայն իրը հետաքննական՝ կը զնենք հոսու :

Մեծին Խոսրովու անուամբ հրատարակուած Ժամանակաբութեան ազօթից մեկնութեան <sup>2</sup> մէջ , յետ զնելու փառք ի բարձութեաւ

1. Ասանք են զլեւաւորապէս , ինչպէս վերը տեսանք , Ա. — Գովելմբ զրեզ , երգարանեմբ զրեզ , փառաշորեմբ զրեզ : Բ. . — Ուրբր Աստուած , Աստուած , Միայն ասորւոյն սեպհական : Գ. . — Գասե Աստուածոյ , որ բառնաւ զմեզս աշխարհի , ողորմեաց մեզ : Դ. . — Միայն Ուրբր , միայն Տէր , Յիսուս Քրիստոս , ի փառս Աստուածոյ Հօր : — Անցալաբար հիշեալու նաեւ , որ հետապայ դարսուց մուտ գտած են երգիս զանազան յաւելուածք մուտ գտած են երգիս

մէջ ի տեղիս տեղիս սակայն կամ խիստ մասնական , և կամ ամենեւին եկեղեցական գործածութիւն մուսնեցած չըլլալնուն համար , զանց ըրբնք անոնց վրայ խօսիլ :

2. Կը յանձնենք մեր ընթերցալաց , որ և է ամալ հասկացողութեանց տեղի չաւալու համար , լաւ ուշ զնել այդ հրատարակութեան վերնազրոյն . « Գիրք որ կոչ մեկնութիւն աղօթից , արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիկոպոսի , և այլ սրբոց վարդապետ

Հրեշտակային բասերու մեկնութիւնը, կը գտնենք հետեւեալ ծանուցումը. «Եւ այս մինչեւ ցայտվայր հրեշտակային է օրհնարա նութիւն, և եղաւ ի սկիզբն աղօթիցս իր հիմն հաստատուն... և որ զինի հետակայ բան է՝ յԱռաքելոցն ասի երգեալ»: Եւ յառաջ վարելով մինչեւ վասն մեծի փառացքոց, կը յաւելու. «մինչեւ ցայս վայր առաքելոցն առի երգա»: Աը ոկրի ապա մեկնել Տէր քաղաքոր և այն մինչեւ ցվերջ ամեն. ուր կը զին. «Եւ այս մինչեւ ցայս վայր սրբէս յառաջն ասացաւ<sup>1</sup>, սրբոց արանց խօս է աղօթը և զաւանութիւն ի սուբր երրորդութիւնն կարծ և համաօտ բանիւ. առ ի հաստատութիւն ուղղափառ դաւանուցաց, և զինի եկեղեց վատահութիւն և հաւատարմութիւն»: Խոկ մասցած մասին համար կ'ըսէ. «Այդ որ զինի է, յետոյ և ասացած յԵփեսսոսի ժայռովոյն, իր վկայութիւն և ձեռնարի առաջնոյ օրհնութեանցդ որ ի սրբոցն էր»: Ասոր կը վկայեն նաև բնդհանրապէս զրչափիր ժամագիրը, որը հաս կը զինեն միշտ, ժողովոյն կամ յԵփեսսոս բաները: Հ. Պօղոս Յավիանեանց վ., աղ իր Տիեզերական ժապավագ պատմութեան<sup>2</sup> մէջ, ասոնց վրայ հիմնեալ կը յիշափակէ որ, «բայ զրելոյն խոսրուու մեծի Անձեւացեաց եպիսկոպոսի, ի ամին սուբր մուղլի յօրինեցաւ երկրորդ մասն հրեշտա-

տաց, և հաւաքեցեալ ըստ կարգի ի միում տրփի ի Առվասիսէ ու մեմնէ աշխատանէլ վարդուպետէ»: — Եւ կ'իմացնենք հոսուր բնուն փառք ի բարձունափ հաստատութեան ժամանակին վերաբերեալ մասերն բոլորովն ուրիշ (շատ հաւանականաբար՝ խմբովովն) անձի կը վերաբերին:

1. Աւշագրութեան արժանին են նուիւ այս որպէս յասազն ասացաւ բուռերն սրմնեք կը հաստատեն մեր վերագոյն ըստածն, թէ երգիս հաստատութեան ժամանակին վերաբերեալ մասերն իմբագրին կը վերաբերին. որովհետեւ առաջ ըստածն չէ ուրիշ անել, բայց եթէ երգիս մեկնութեան նախաբանի մէջ, հետեւեալ բաւուրով. «Զի յայտնի լիցի ամենեցուն հաւատու մեր և դաւանութիւն և խստորգանութիւնն ի Սուբր երրորդութիւնն . . . իսկ զի կ'արգեալ եւ

կտկան փառարանութիւննն: Եւ ուրիշ տեղ մալ (յԷջ 134) կը ծանուցանէ որ «Առաջ զութիւնն է առ մեղ՝ թէ մասն մի հրեշտակական փառարանութիւննն, ասացաւ ի սմին այսմիկ կ. Պալայ Ա. ճազավայն հարփեր յիւ սուն հայրապետաց», Աակայն այդ ժողովոց ամենն ուի եկի ընդարձակ պատմութեանց և գործոց մէջ խոկ անկարելի եղած է մեղ մինչեւ ցայժմ: այդ նկատմամբ պղտիկ ակնչ արկութեան մ'անդամ հանդիսավոր, սրով բնուածնը վարանիր Ցաթիւացուն ընծայել այդ ամէն զիւտերն: Եւ յիրաւի առաջին անդամ իւր Հարցմանց զրոց (Թ) մէջ կը կարդանցը հետեւեալ տեղիկութիւնը.

«Այն որ ասի Փառաք ի բարձունս Աստուծոյ . . . հրեշտակացն է երգ. և մինչ ի ժաղովն Կիկիոյ զայս ասացին . . . Եւ անդ (ի ժաղովի) յաւուր կիւրակէի առաւոտին մրաբան ի մի բարբու յաւելին յերգս հրեշտակացն և զայս. Օրինուրիւն ըեկ ի բարձունս, մինչ ցայն, . . . Յիսուս Քրիստոս: Եւ մինչ ի ժաղովն Կ. Պուտիկ զայս ասացին: Եւ անդ ընդէւմ Հոգեմարտին զայս. Տէր և Հոգիս սուրբ: որ ի փառա Աստուծուն ընդ Հօր. ամեն, մինչեւ ցայն, Օրինեալ Տէր, ուսու ինձ զարդարութիւնն ըստ: Ապա ի ժաղովն Եփեսսոսի վերաբերին հաստատեցին դՓառքի ի բարձունսն ի սուբրուէն, յաւեւուրանէն և ի մարդարելին զայ ինչ (յաւելլով) Տէր ապաշէն, մինչեւ ցայն ժագան զրութեալիւթիւնն ըստ որ ձանակէն զըկէ Տէր»:

զեւ ստ յամենայն առուր երգել յեկեղեցւազ մրաբան հաւատացելոց անխափան սովորութեամբ, ունիմք զայս հաստատացոյն յաւանն ուութենէ սրբոց հարցն, սրք. երբեմն ի մի ժաղովեցան հրամանաւ Հոգւոյն Արբոյ, զրացեալ ի քակումն աղանդոյ անվաւեր չարտափառութեանն . . . Որք երգեցին զփառարանութիւնն զայս առ ի հաստատութիւն համար վկի եկեղեցն և անաւու անդ ի համար ի հիմնին կ'առ ի համարակութեան իւր անուամբ զրութեան յաւագրանին հետ:

2. ՅԷջ 199. իսկ Խոսրովան ընծայելուն նըլկատմամբ, տես վերաբերալ ծանօթութիւնքն 1. 2 (յԷջ 31) և 3 (յԷջ 28):

Հետագայ դարուց զրչագիր ժամապրոց ու  
մանը նոյնը կը կըկնեն ճիշտ, մի քանի  
անհշան բարից յաւելմամբ կամ փոփոխմամբ:

\* \*

Երկու խօսք ալ ըսենք հրեշտակային եր-  
կիս զործածութեան մասին, որ յեաին կազ-  
մակերպութեան և եկեղեցական կիրառու-  
թեան մէջ մանելուն անձանօթ ժամանա-  
կն յառաջ, առ ոմանս ի զործածութեան  
եղած կը թուիս Ասկերեան՝ իր ժամանա-  
կն համար կը վկայէ թէ անապատաւորք  
ամէն օր կ'երգին և երբեմ հրեշտակը ալ  
իրենց կ'ընկերէին: Եպյնու Ա. Աթանաս  
կը վկայէ, որ իր ժամանակ կանայք ան-  
զամ ի բերան զիտէին զայն և Եւ ինչ որ  
սույզ Ե յարեւելո շատ հին ժամանակներ  
ի զործածութեան էր (հաւանականաբար, առ  
ապրելական Հարոց դարան), մինչդեռ յարեւ-  
մասս առելի աշ մնաւ զտած է: — Եկե-  
ղեցական կիրառութեան մէջ ալ առաջ ի  
ժամերգութեան մտած է ամէն եկեղեցեաց  
մէջ, և յետոյ, մի քանի եկեղեցեաց մէջ  
նաեւ ի պատարագի, մասամբ կամ ամրագչ:  
Առ Լատինու պատարագի մէջ մնաւ զանելէ  
վերջ, ժամերգութեան մէջն հանուած կ'ի-  
րեւի: Առաքելական Առհմանազրութեանց  
մէջ, երդիտ վերնազիր զրուած է Առաջուեսն  
աղօրք: — Առ Լատինու, երբ թելեսփորս  
և Սիրմաքս քահանայապեաք երդիտ կիրա-  
ռութիւնը հրամայեցին, եպիսկոպոսը միայն  
կրնային զայն ըսել, իսկ քահանայից՝ միայն  
Զատիկի օրը հրաման կար. սակայն ԺԱ գո-  
րուն ամէնուն այ թոյլ տրուեցաւ ամէն օր  
ըսել զայս ի պատարագի, մի քանի սահ-  
մանիալ օրեր ի բաց առնլով, յորս զետ-  
ցայմմ հրաման չկայ փառք ի բարձուենի  
ըսել: Առաքյն յարեւելո բոլորավին տարրեր  
կը գտնենք սալորութիւնը: Ի մեզ ամէն օր  
անխափան կ'բառի ի ժամերգութեան, միա-  
րան և յատեէի, ըստ սահմանաց Տեանն  
Ներսի Հայոց կաթուգիկոսի (կարգաւորա-  
թիւնը եկեղեցւոյ և արարողութիւնը ժամա-  
տեղաց) օր կ'ըօէ: Զփառք ի բարձուենի  
յառեւան առեն մխարան, և ի հանդիսի ա-

շուրս ժամանարւաւ: Առոր նման հրամաններ  
կը գտնենք նաեւ Յունաց ծիսարանաց մէջ.  
որոնք նաեւ երգելու մասին սեպհական ծէս  
մ'ունին. ամբողջ երգը կը բաժնեն մեծ տու-  
ներու, զորս փոխն ի փոխ կ'երգեն երկու  
զասեր: Հոսկմէկական եկեղեցին ալ նման ծէս  
մ'ունի. փոխանակ այդ յունական մեծ բա-  
ժանմանց, երգիս իւրաբանչիւր հատածները,  
մեծ կամ փորք, փոխն ի փոխ ըսել կու տայ  
երկու զասերուն: Խոկ Ամբրոսիան արարողու-  
թիւնը կարծէր կերպով մը իրարու կը միա-  
ցընէ այս երկու ծէսերը, և փոխանակ երկու  
կողմանքն ալ մի առ մի երգեցնելու, ամէ-  
նուն միաբան երգել կու տայ, միայն իւրա-  
բանչիւր մեծ հատածներուն՝ երկու զասերը  
փոխն ի փոխ ձայներնին կը բարձրացնեն:  
Բաց ի ժամերգութենէ և ի պատարագէ,  
սրբից ժամանակներ եւս զործածուած է երգս  
և կը զործածուի, ինչպէս ի մեզ՝ յօրհնու-  
թիւն նորաշն եկեղեցւոյ, ի թազման կար-  
գի, և այն, զորս մի առ մի յիշել մեր նպա-  
տակն գուրս և և շատ հեռու տանի զմեզ:  
Միայն ի լրումն սոյն համառօտ տեսութեան  
կ'ուղենք յիշատակել մեզ համար սիրալի  
յիշատակ մ'ալ, զոր կը կարգանք ի Վկա-  
յաբանութիւնու<sup>1</sup>. «Ի ժամանակս... վերա-  
կացութեան (Տաճկաց) Արվակերեայ (ի սկիզբն  
Ք. զարու) հսկ ի մեզ վառեցին... անօրէն  
խորհուրդ առեալ, զի զորս և զզօրապլուխս,  
զպեսս և զիշխանս, զազատատոհմն և զնախ-  
արաբազունս ընաջինջ (բարձրեն) . . . Եւ  
ժողովիալ զնախարարս աշխարհիս ի սուրբ  
եկեղեցին արկանէին, և զզրուս վերջ ա-  
ռեալ փակէին: Խոկ նոցա ձայն տոկալ զուրբը  
մանկանցն օր ի հոնցին օրչնելով, և պա-  
զէրեշտակացն երգս ընդ հովիւն փառաւո-  
րէին և զվերին զուարթնոցն: Եւ նոցա զվեր-  
նայարկոն քակեալ՝ լուցին հրով, և բան  
զբարեկովին ի վեր բարձրացուցին այրեցտ-  
կան նիւթովիք . . . Եւ նոցա անդադար զո-  
հարանութիւնն ընդ սպառեալ հոգւոյն դա-  
զարեաց»:

Հ. 8. ԱԿԳԵՐԵԱԿՆ

1. Հմատ, Վ. Հ. Ջ. Ջ. Վ. Ալեքան, «Հայ-  
պատում» (մեծութեալ ընդ մամլով) էջ 245: